ՌՈՒԶԱՆՆԱ ԴՈԽՈՅԱՆ

«ԱՍԵԼ» ԲԱՅԻ ԲԱՌԱԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ասացական բայերի բառաիմաստային խումբը (այսուհետև՝ ԲԻԽ) առանձնանում է ոչ միայն իմաստային-ճանաչողական տեսակետով, այլև կարևոր դեր է կատարում հաղորդակցության իրականացման գործում:

Ըստ է. Աղայանի՝ ասացական են համարվում ասվող, արտասանվող, ասելու՝ խոսելու իմաստ ունեցող՝ արտահայտող բառերը[1]: Այլ կերպ՝ ասացական ԲԻԽ-ի բայերը միավորվում են իմաստային հետևյալ միասնական հատկանիշով՝ միտք արտահայտել կամ տեղեկատվություն հաղորդել բանավոր ձևով[2]. օրինակ՝ *ազդարարել, անվանել, գրուցել, հարցնել, պատասխանել, պատմել, տեղեկացնել* ևն:

Ասացական բայերը հիմնականում բազմիմաստ են:

Բազմիմաստությունը միևնույն բառի մեջ իրար հետ կապված մեկից ավելի իմաստների առկայությունն է, որ առաջանում է սովորաբար այդ բառի սկզբնական իմաստի զարգացման հիման վրա: Այն միևնույն բառի՝ տարբեր, մեկից ավելի իմաստներով գործածվելու հատկությունն է[3].

Բազմիմաստ բառը մտնում է այս կամ այն համանիշային կամ հականիշային շարք իր իմաստներից որևէ մեկով կամ մի քանիսով, հետևաբար բառային իմաստաբանության որևէ միավոր նկարագրելու համար անհրաժեշտ է ունենալ ոչ միայն հիմնական, այլև նվազագույն միավոր: Բառային իմաստաբանության հիմնական միավորը բառն է, նվազագույն միավորը՝ բառի բառաիմաստային տարբերակը (այսուհետև՝ ԲԻՏ):

Լ. Նովիկովը բառի ԲԻՏ-ն համարում է հաղորդակցական նվազագույն միավոր(լեզվական նշանակության և արտաքին նշանի միասնություն)[4]:

Հիմնական և նվազագույն բառային միավորների տարբերակման անհրաժեշտությունը ռուս լեզվաբանության մեջ գիտակցվել է դեռևս Ա. Պեշկովսկու կողմից: «ԲԻՏ» տերմինը ներմուծել է Ա. Սմիրնիցկին, ըստ որի. «Բառի ԲԻՏ-երը տարբերվում են իրենց բառային նշանակություններով (ընդ

---

[1] Աղայան Ա. Արդի հայերենի բացատրական բառարան (հմտ.՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 110:
[2] Ժ. Սանուկյան, Ժամանակակից հայերենի ասացական բայերը և նրանց իմաստային տիպերը, «Լուրեր հասարակական գիտությունների», Ե., 1978, N 11, էջ 89:
[3] Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջ 110:
[4] Л.Новиков, Семантика русского языка, М., 1982, с. 49.

որում այդ նշանակությունների տարբերությունները չեն արտահայտվում նրանց հնչյունական թաղանթում)»: Այսպիսով՝ նրանք ծնավորում են մեկ բառի իմաստային կառուցվածքը[5]: Սրանից էլ հետևում է, որ ԲԻՏ-ն բառն է՝ իր մեկ կոնկրետ նշանակությամբ:

Ասացական բայերի ԲԻԽ-ում «ասել» և «խոսել» բայերը միջուկային են համարվում և իմաստային առումով համակարգային դեր են կատարում՝ իրենց շուրջը միավորելով այս խմբի մյուս բոլոր բայերին:

Որպես բազմիմաստ բառեր՝ «ասելն» ու «խոսելը» իրենց ԲԻՏ-երով մտնում են տարբեր համանիշային շարքերի մեջ, որոնց անդամները ևս համարվում են ասացական բայեր: Ընդ որում այդ շարքերի անդամներն ընդհանրություն ունեն միջուկային բայերի հետ՝ ըստ իրենց նույնականացնող և տարբերակող իմաստների[6]: Օրինակ՝ բազմիմաստ «վիճել» բայը ունի հինգ ԲԻՏ: «Վիճել» նշանակում է 1.Վեճ վարել, հակաճառել, վիճաբանել: 2. Առարկել, ընդդիմանալ (խոսքով), դիմադրել, ընդդիմախոսել: 3.Խոսքակռիվ տալ. խոսքով կռվել: 4. փխբ.Մրցել: 5. փխբ. Կռվել, պայքարել, բախվել[7]: Այս բայի առաջին երեք ԲԻՏ-երը մտնում են ասացական բայերի ԲԻԽ-ի մեջ, իսկ չորրորդ և հինգերորդ ԲԻՏ-երը չունեն ասացական բայերի միասնական (ինտեգրող), նույնականացնող հատկանիշը՝ միտք արտահայտել կամ տեղեկատվություն հաղորդել բանավոր ձևով: Սրանք մտնում են այլ ԲԻԽ-երի մեջ:

Ֆ. Խլղաթյանը բազմիմաստ բառի ԲԻՏ-երը անվանում է նույն բառի ածանցյալ իմաստները՝ գրելով, որ բազմիմաստ բառերի իմաստներից մեկը հիմնականն է, գլխավորը, իսկ մյուսները՝ նրանից ածանցյալ: Բառարաններում առաջինը նշվում է հիմնական իմաստը, ապա մյուսները՝ ըստ խոսքի մեջ իրենց ունեցած գործածության հաճախականության կամ ակտիվության: Բառարանից դուրս բառը ընկալվում է իր հիմնական, գլխավոր իմաստով, իսկ մյուս իմաստները դրսևորվում են խոսքաշարում[7]:

«Ասել» բազմիմաստ բառույթը մտնում է ասացական բայերի ԲԻԽ իր բոլոր ԲԻՏ-երով: «Ասել» բայի համար «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» նշված է քսաներկու ԲԻՏ[8], է. Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»՝ տասնութ ԲԻՏ[9]: Այս երկու

---

[5] Л.Новиков. տես նշվ. աշխ., էջ 111-112.

[6] Антонова С., Глаголы говорения-динамическая модель языковой картины мира: опыт когнитивной интерпретации. Монография.Гродно, 2003, с. 220.

[7] Տես ԱՀԲԲ, էջ 1391.

[7] Ֆ. Խլղաթյան, Ժամանակակից հայոց լեզու, Բ պրակ, Ե., 2008, էջ 14 -15.

[8] ԺՀԼԲԲ, հատոր առաջին, Ա-Ե, Ե., 1969, էջ 184-185.

[9] Տես ԱՀԲԲ, էջ 110.

բառարանների ԲԻՏ-երը համադրելով՝ «ասել» բայի համար կարելի է առանձնացնել քսաներկու ԲԻՏ կամ ածանցյալ իմաստ: Դրանք են.

1. Միտքը խոսքով արտահայտել, դրսևորել.

Երբ այն ավարտվեց, Հռիփսիմեն վեր կացավ և դիմելով վանականին՝ ասաց. «Եթե դու իսկապես սիրում ես ինձ, մոտեցիր և գրկիր ինձ» (Մ. Մանուկյան, Սիրո գանձարան, Ե., 2003, էջ 223).

2. Հաղորդել, հայտնել, տեղեկություն տալ.

«Օսմանցին լցվավ Գյումրի»,- ասաց սուրհանդակ Անդրեասը, և խնդրեց, որ շտապ մեկնեմ (Խ. Դաշտենց, Ռանչպարների կանչը, Ե., 1984, էջ 347):

3. Հիշատակել.

Այդ իմպեսների մասին են ասում,

Թե մարդու տղան ոսկի ձեռք ունի (Պ. Սևակ, Ե.ժ. 3 հ.-ով, հ.1, Ե.,1982, էջ 121):

4. Անվանել, կոչել.

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում (Պ. Սևակ, հ.1, էջ 62)

5.Հրամայել, հանձնարարել, պահանջել, պատվիրել.

Ես ասում եմ ձեզ՝

մարգարեի պես.

-Օ՜, կնատարազ այրերի ոխից վախեցեք կյանքում և սարսափեցեք նրանց վրեժ՝ից անբեկանելի (Պ. Սևակ, հ. 2, Ե., 1983, էջ 283):

6. Պատասխանել.

Ասա, Վարդապե՜տ,

Ո՞վ է քո սերը. (Պ. Սևակ, հ. 2, էջ 153):

7. Պատմել.

Ասում են, իբրև, խարույկի վրա

Ջահել ըմբոստի մի սիրտ են այրել (Հովհ. Շիրազ, Քնար Հայաստանի, Ե. 2000, էջ 105).

8.Մեկի, մի բանի մասին կարծիք, դատողություն արտահայտել, խոսել.

Ասում են, որ այդ բերդը շինելիս նահրցի վարպետները ծվի սպիտակուց են գործածել շաղախի փոխարեն,- ահա, թե ինչու է այդ բերդը անխորտակելի(Ե. Չարենց, Ե.ժ., 4 հ.-ով, հ. 4, Ե.,1987, էջ13):

9. Գուշակել, նախազգալ, *կկայել*, զգացնել տալ.

-«Ապու-ապու, կապու-կապու...

Եկ մի տեսնենք՝ ի՞նչ կա ափում...»:

-«Աթու-աթու, հա թուհ-հա՜ թուհ...

Տեսնենք տղան ի՞նչ է ասում...» (Պ. Սևակ, հ.1, էջ 370):

ԺՀԼԲԲ-ում նշված է «գուշակել» իմաստը հետևյալ օրինակով՝ Աղջի Վարդիշաղ, թե հոգիդ սիրես, մի գարիդ գցիր, տես ինչ է ասում...» (ՀԹ), իսկ ԱՀԲԲ-ում այս իմաստը բացակայում է, բայց կա «*վկայել*, զգացնել տալ, նախազգալ» իմաստը հետևյալ օրինակով՝ Սիրտս՝ հոգիս ասում է...: Եվ քանի որ գուշակել (նբ.1. Լինելիքը առաջուց գիտենալ և ասել, նախասել, մարգարեանալ. 2. Կախարդությամբ ապագան ասել. որևէ բանի ելքը՝ վախճանը նախատեսել: 3. փխբ. Կռահել, գլխի ընկնել: 4. Ցույց տալ, ահազանգել, ազդանշել: 5. փխբ. Կանխազգալ, նախազգալ):[10] բառն ունի նաև «կանխազգալ», «նախազգալ» ԲԻՏ-ն, կարծում ենք՝ երկու բառարաններում նշված հիշյալ իմաստները կարելի է միավորել՝ դարձնելով մեկ իմաստ՝ գուշակել, նախազգալ, *վկայել*, զգացնել տալ՝ բացառելով «վկայել» ԲԻՏ-ն, քանի որ «գուշակել» բայի համանիշային շարքում[11] ևս նշված են այս իմաստները՝ բացի «վկայել» բայից, որը նշանակում է «1. Որպես ականատես կամ լավատեղյակ մարդ՝ հաստատել որևէ բան: 2. Արտահայտել որևէ բան, որևէ բանի արտահայտությունը լինել, հաղորդել որևէ բան: 3. (իրավբ.): Որպես վկա դատարանում ցուցմունք տալ՝ իր իմացածները՝տեսածները հայտնել: 4. Հավաստել, հաստատել. 5. Որևէ բանի ապացույցը լինել: 6. փխբ. Նահատակվել, իբրև վկա մարտիրոս տառապանքների ու չարչարանքների ենթարկվել, տառապել, տանջվել: (Այս կետի «փխբ.» նշումը, կարծում ենք, ճիշտ կլինի փոխարինել «հնց.» նշումով՝ Ռ. Դ): 7. (կրոն.): Նահատակվել, մարտիրոսանալ[12].

10. Մի բանի արտահայտության նշանը լինել, վկայել մի բանի մասին.

Այդ էր ասում նրա անսովոր, լուսաշող ժպիտը, որից դեմքն այնպես գեղեցկանում, դառնում էր զարմանալի (Զ. Խալափյան, Ջերմանց մխիթարություն, Ե. 1979, էջ 295):

ԺՀԼԲԲ-ում նշված է «ցույց տալ, հայտնի անել (շարժումով, դիմախաղով և այլն)» իմաստը հետևյալ օրինակով՝ Նրա փոխարեն ասում էին նրա ուռած և արյունով լցված աչքերը, հաստ շրթունքը (ՀԹ), ԱՀԲԲ-ում այս նշանակությանը համապատասխանում է տասնհինգերորդ իմաստը՝ «որոշ բան արտահայտել, ինչ-որ բան նշանակել, որոշ իմաստ ունենալ» հետևյալ օրինակով՝ Ապա շարունակեց լուռ քայլել, որ նույնպես բան էր ասում (Ս. Այվազյան), և

---

[10] Տես ԱՀԲԲ, էջ 269.

[11] Ա. Սուքիասյան. Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., 2003, էջ 223.

[12] Տես ԱՀԲԲ, էջ1394 -95.

տասնվեցերորդ իմաստը՝ «մի բանի արտահայտության նշան լինել, վկայել մի բանի մասին» հետևյալ օրինակով՝ Նրա արարքը այդ էր ասում:

Այս երեք իմաստները միավորելով՝ կարելի է ընդունել մեկը՝ «մի բանի արտահայտության նշանը լինել, վկայել մի բանի մասին»:

11. Երգել.

Հիմի անտուն ման եմ գալիս, գիշեր-ցերեկ

Երգ եմ ասում (Ե. Չարենց, հ. 1, Ե. 1986, էջ225):

12. Մտածել.

-Ասում եմ,- շրջվեց Վիգենի կողմը,- եթե մարդկությունը անմահական էլիքսիր հայտնաբերեր, ի՞նչ կլիներ (Զ. Խալափյան, էջ174):

13. Հոգ տանել, մտահոգվել, մտքով անցկացնել.

«Ո՞չ, ամեն ինչ ծռվեց, տակնուվրա եղավ»,- ասաց նա յուրովի և ամբողջ ճանապարհին մտածում էր, թե ինչպես դիմագրավի այս նոր աղետներին (Դ.Դեմիրճյան, Վարդանանք, Ե.,1987, էջ 177):

14 . Կրկնել.

Ա՞խ, սիրտս նաև նման է կարծես...

Նման է կարծես նա մի թութակի,

Որ ո՞ղջ ժամանակ նույն բանն է ասում.

-Ես քեզ եմ ուզում...(Պ. Սևակ, հ. 1, էջ 245):

15. Արտասանել, խոսել, ասմունքել.

Աշխարհի առաջ բարձրանալ տեղից

Ու հատ-հատ ասել.

-Խոսելն իզուր է, ճառելն՝ անտեղի:

Սիստը՝ր, աղա, սը՝ր,

Տիկնայք մեծարգո, պարոնայք ազնիվ

Քար ու կշեռքին ի՞նչը նհասնի (Պ. Սևակ, հ. 2, էջ 66):

ԺՀԼԲԲ-ում կա «արտասանել» իմաստը, ԱՀԲԲ-ում որպես բառաիմաստային երրորդ տարբերակ նշված է «խոսել, արտասանել (ճառ ևն)», և տասնյոթերորդ իմաստը՝«ժդ. ասմունքել»:

Մենք այս երեքը միավորում ենք մեկ իմաստի մեջ՝ խոսել, արտասանել, ասմունքել

16. Պնդել.

Իսկ ես էլ կասեմ.

«Այո գժվե՞լ եմ,

Ինչու՞ չգժվել» (Պ. Սևակ, հ. 1, էջ 421):

17. Առարկել.

Հանեցեք ձեր դիմակները,
Որ գեթ մի քիչ դյուրին շնչե՞լ կարողանաք...
Ինքնե՞րդ ասեք.
Բավական չէ՞
Դուք ձեզանից ձեզ գողանաք
Եվ տեղն ուրիշ մեկին դնեք ձեր փոխանակ: (Պ. Սևակ, հ. 1, էջ 126):
18. Նախազգուշացնել.
Ես ձեզ ասում եմ՝ կըգա Ոգու սով,
Եվ դուք կըքաղցեք ճոխ սեղանի մոտ,
Կընկնեք մուրալու հափրած որկորով՝
Հըրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ (Ավ. Իսահակյան, Երկեր, Ե., 1980, էջ 84):
19. Հրմ. եղ. ասա, ասեք կամ ասացեք. գործածվում է որպես եղանակավորող բառ.
ա. միայն թե, երանի թե նշ.
-Աշխարհքս միշտ կմնա, ասա մարդը սևերես չմնա...(Ա. Բակունց, Երկեր, Ե., 1986, էջ 156),
բ. ուրեմն նշ.
Մեր ծերությունը
Կարող է հանկարծ մեզ հարցնել մի օր.
«Իսկ որտե՞ղ, ասեք,
Ինչպե՞ս երևաց,
Ինչո՞վ երևաց
Զահելությունը ձեր ամենազոր» (Պ. Սևակ, հ. 1, էջ 217):
20. Շաղկապական բառ, կարծես թե (ըղծ. և պայմ. եղ-ի 2-րդ դեմքով).
Մեր ներսն ամբողջ ասես լինի
համակ խտուտ,
Ինչպես կուրծքը նորահարսի (Պ. Սևակ, հ. 1, էջ 146):
21. Շաղկապական բառ, չնայած, թեև (ըղծ. եղ. հոգնակի 1-ին դեմքով).
Ես հույս ունեմ ... ասենք պարտք ենք...
Բայց չէ՞ ախար մենք էլ մարդ ենք...(Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 2, Ե., 1990, էջ 95):
22. Եղանակավորող բառ, ենթադրում ենք,
ընդունենք.
Բա չե՞ս տեսնում, թե քո ծեռին
Ոնց են դողում: Ասենք մեծ ես,
Մի՞թե պիտի փոքրին տանջես...(Հովհ. Թումանյան, հ. 2, էջ 147):

«Ասել» բայի ԲԻՏ-երին մենք հավելում ենք նաև հետևյալ իմաստները, որոնք տեղ չեն գտել հիշյալ բառարաններում.

1. Բացականչել.

Վա՜յ, ասում է, չէ, այդ ի՞նչ ես ասում, կնիկս ինձ կսպանի, այդ ի՞նչ ես ասում (Զ. Խալափյան, էջ173.):

2. Բացատրել.

-Լիլիթ, աննման Լիլիթ, դու իմաստուն ես. ասա

ինձ, այս ի՞նչ զգացում է, որ բույն է դրել հոգուս մեջ քեզ տեսնելու վայրկյանից (Ավ. Իսահակյան, էջ 79).

3. Եզրակացնել.

-Անունդ տակը չգրելը զարմանալի խելոք է,- ասաց Հմայակը (Զ. Խալափյան, էջ 177):

4. Թվարկել.

Ես կյանքում ինչքա՜ն գիշեր եմ ունեցել,-

այդպես է ասել (Պ. Սևակ, հ. 1, էջ 212):

5. Խնդրել.

Կանուչս կերթամ, ասա թող գա, ծիով թող գա, ինձ տանի,

Ասա թող գա՝ որսը տանի, թե որսկանն է Սիփանի...(Հովի. Շիրազ, էջ 199):

6. Խոստանալ

Մամբրեն էլ հետաքրքրվում էր, թե ավտոմեքենան երբ ես առնելու: Երկուսդ էլ դատապում եք՝

-Կառնեմ. Ասել եմ, կառնեմ (Վ.Պետրոսյան, Չորս վիպակ, Ե., 19 90,էջ201):

7. Հայտարարել.

Նաև ասում եմ.

Գերադասում եմ կրակից հեռու մի փոքր մրսել,

Քան այրվել նրա մոտիկությունից.

Եվ հրաժարվել հյուրասիրվելու սուր ցանկությունից,

Քան դժվարությամբ կերածս մարսել...(Պ. Սևակ, հ. 1, էջ 400):

8. Հարցնել.

Ասացի՞ ի՞մն ես:

Ասացիր՝ քոնն եմ:

Ու լուռ ենք հիմա... (Պ.Սևակ, հ. 1, էջ 313):

9. Հաստատել.

-Ես կսպասեի այդ աղջկան,- մռայլ ասաց Մանուկը:- Ալիսան իր նամակում գրել էր, որ մինչև մահ կսիրի ինձ.

-Կսիրի,- ասաց Ռուբենը(Վ.Պետրոսյան, էջ 246):

Իհարկե, այս հավելումը նույնպես վերջնական չէ, և այն կարելի է հարստացնել այլ բայերով ևս, քանի որ միջուկային «ասել» բայը գործածվում է բազմաթիվ այլ իմաստներով, և այդ գործածությունը այնքան հաճախական է (հատկապես գեղարվեստական խոսքում), որ թույլ է տալիս բացահայտելու միջուկային ասացական բայերի իմաստային կառուցվածքի ծավալային ընդգրկումը:

ԲԻՏ-երի այսպիսի առատությունը պայմանավորված է նրանով, որ «ասել» բայը հարաբերակցվում է հաղորդակցման գործընթացին՝ նշանակելով խոսքային գործունեության տարբեր կողմեր:

«Ասել» միջուկային բայի և նրա բառիմաստային տարբերակների կառուցվածքը ներկայացնում ենք հետևյալ գծապատկերով (տե՛ս գծապատկեր 1):

Այսպիսով՝ միջուկային բայերի առանձնահատկությունների բացահայտումը հնարավորություն է տալիս ճանաչելու նաև տվյալ ԲԻԽ-ի բայերի հատկանիշների ուրվագծերը ամբողջության մեջ:

Ամփոփելով նշենք, որ.

1. Միջուկային բայերի գործառական ճկունությունը պայմանավորված է նրանց՝ խոսքային գործունեության բոլոր կողմերը նշանակելու բազմունակությամբ:

2. Միջուկային բայերը իրենց բառիմաստային կառուցվածքի, խոսքում կատարած դերի տեսանկյունից ասացական այլ բայերի գործածության համար չափանիշ են հանդիսանում:

3. Միջուկային ասացական բայերը հանդես են գալիս որպես գործառական համարժեքներ եզրային ասացական բայերի համար: